

ՀԱՅ-ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ
Աղաբեկյան Մ. (ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, Հայաստան)
melada-aghabekyan@mail.ru

Բանալի բառեր` ուրարտերեն, հայերեն, ստուգաբանություն,
ցեղակցություն, լեզվական ընդհանրություն:

Ուրարտերենի և ժամանակակից այս կամ այն լեզվի, ինչպես և
հայերենի միջև որոշ գիտնականներ մերձավոր ցեղակցություն են
տեսնում: Մեկ այլ խումբ էլ կտրականապես մերժում է այդպիսի
կապերի առկայությունը: Այս վեճը, կարծում ենք, գիտականորեն
ապացուցված, համոզիչ լուծում դեռ չի ստացել` տվյալների
սակավորյան, համապատասխան մասնագետների (լեզվաբան,
հնագետ, պատմաբան, սեպագրագետ և այլն) ուժերի համախմբման
բացակայության, տեսակետների անհամատեղելիության պատճառներով:
Ուստի *ուրարտերեն* եզրույթն օգտագործում ենք լոկ որպես Վանի
թագավորության մ.թ.ա. I հազարամյակի սեպագիր
արձանագրությունների լեզվի պայմանական անվանում:

Հայերենի և ուրարտերենի լեզվական
համապատասխանությունները սովորաբար ուսումնասիրվում են
պատմահամեմատական մեթոդով, որը հենվում է համեմատվող
լեզուների պատմական հնչյունական օրենքների վրա: Տվյալ դեպքում,
հասկանալի պատճառներով, նկատի են առնվում բացառապես
հայերենի նախագրային շրջանի հնչյունական օրենքները: Սակայն
դրանց գործառական յուրահատկությունների ոչ ճիշտ ընկալման
հետևանքով, որ հատուկ է հատկապես ոչ լեզվաբան մասնագետներին,
կատարվում են սխալ ստուգաբանություններ, հակասական
եզրակացություններ: Յուրաքանչյուր հնչյունական օրենք գործում է
որոշակի օրինաչափություններով և որոշակի ժամանակահատվածում:

Անփուլթ մոտեցում է ցուցաբերվում հատկապես այդ օրենքների հարաբերական ժամանակագրությանը, երբ միաժամանակյա գործառույթուն է վերագրվում իրարամերժ հնչյունական անցումների:

Հայերենի և տարածաշրջանի մեռած լեզուների զուգադիպումները, ինչպես հաճախ է նշվել, ոչ միշտ կարող են լինել տվյալ ժողովուրդների անմիջական շփումների արդյունք: Հնարավոր է, որ մի մասը միջնորդավորված, այսինքն՝ այլ լեզուների միջոցով կատարված փոխանցումներ են: Չի բացառվում նաև, որ հայերենի և ուրարտերենի որոշ համապատասխանություններ գալիս են նոստրատիկ լեզվաընդհանրության շրջանից: Իսկ գիտնականները ավելի ու ավելի են հակվում նոստրատիկ, ինչպես և հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքը Փոքր Ասիայի և Մերձավոր Արևելքի տարածքներում տեղակայելուն: Ուստի հայերենի և ուրարտերենի ընդհանրությունների մի մասը, հնարավոր է, ունեն հնագույն ծագում, իսկ որոշ համապատասխանություններ էլ գոյացել են մ.թ.ա. I հազարամյակից առաջ:

Ուրարտերենի և ժամանակակից հայերենի բարբառների առնչակցությունների հարցին հաճախ ցուցաբերվել է կանխակալ մոտեցում՝ բացառելով մեզնից II-III հազարամյակ առաջ հայերենի՝ այս կամ այն չափով բարբառային տրոհվածությունը: Հնարավոր է համարվել միայն հայերենում ուրարտերենի ենթաշերտային, խիստ տեղայնացած՝ հիմնականում Վանա լճի ավազանում, որոշ դրսևորում: Սակայն չենք կարող չնկատել, որ ուրարտերեն տեքստերում առկա են նաև հայերենի բարբառային յուրահատկությունների հետքեր:

ETYMOLOGICAL NOTES ON ARMENO-URARTIAN

Aghabekyan M. (National Academy of Sciences of the Republic of Armenia, H. Acharian

Institute of Language, Armenia)